Հայա՞ եթէ սարքը խանգարուի... Փաստօրէն, այսպիսով պիտի ստեղծուի յիշողութեան կորուստի երկտորոնային փարբերակը՝ «c-amnesia»...

ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԺՊԻՏ



«ՎԻՏԷՕ ԵՐԻՉ»Ի ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ...



«Վիտէօ Երիզ» բացատրութիւնը քանի մը տարիէն արդէն պիտի պատկանի պատմութեան գիրքերու մէջ զիջուած բառերու «ձիւղաբ», «նիգակ», «նետ» եւ նմանօրինակ բառերու կողքին: Գաղտնիք մը բացայայտած ըլլալու գոհունակութիւնը



ապրած չենք ըլլար, եթէ ըսենք, թէ «Վիտէօ Երիզ»-ին գահաժառանգը պիտի ըլլայ «Տի. Վի. Տի.»-ն:

«Տի. Վի. Տի. Փլէյ»-ներ արդէն դարձած են պատմութեան ամէնէն արագ վաճառող երկտորոնային սարքերը: Արդարացի երկիրներուն 10 - 15 առ հարիւրին մէջ: «Յորըսթըր Ռիսըրչ» ուսումնասիրական հիմնարկը քանի մը ամիս առաջ հրատարակած իր տուեալներով եկաւ հաստատելու, թէ «Տի. Վի. Տի. Փլէյ»-ները շատ աւելի արագ կը սպառին, քան իրենց մէջ տասնամեակներ իրենցմէ տասնամեակներ արժողութեան տակ զրուած «Վիտէօ փլէյ»-ները: Սեկնարաններու նախատեսութեամբ, «Տի. Վի. Տի.»-ներու վայելած ժողովրդականութիւնը պիտի շարունակէ պիտի շարունակէ խորտակուիլ անոնց վաճառքի ընդհանուր մէջ: Բրիտանական ընկերութեան մը մօտաւոր գնահատումներով, այսօր Եւրոպայի մէջ գոյութիւն ունի 17 միլիոն «Տի. Վի. Տի. Փլէյ»-ներ, իսկ յառաջիկայ հինգ տարուան ընթացքին անոնց թիւը պիտի հասնի 120 միլիոնի: Աւելին, 2003ին աւելի մեծ թիւով «Տի. Վի. Տի. Փլէյ»-ներ վաճառուած են, քան՝ «Վիտէօ փլէյ»-ներ (Վի. Սի. Ար.):

Այստեղ հարկ է յիշել, որ «Տի. Վի. Տի.»-ն թուագրային սկաւառակները ձայնային եւ պատկերի շատ աւելի բարձր որակ ունին, քան իրենց հնամե-

րու, հանրութեան տրամադրութեան տակ զրուելու շուրջ տարի ետք, «Տի. Վի. Տի. Փլէյ»-ները արդէն ներթափանցած են Միացեալ Նահանգներու բնակարաններէն 27 առ հարիւրին, ինչպէս նաեւ Եւրոպայի եւ Մայրցամաքի Արեւելքի ճարտարարեստի կեդրոն հանդիսա-

նի պաշտօնակիցները՝ «Վիտէօ Երիզ»-ները: Տակաւին չենք խօսիր այն փաստին մասին, որ «Տի. Վի. Տի.»-ները շատ աւելի տոկոս են եւ աւելի մեծ թիւով կարելիութիւններ կ'ընձեռեն: Այս բոլոր պատճառները հաւանաբար որոշ պատկերացում մը տան, թէ ինչո՞ւ «Վիտէօ Երիզ»-ին եւ «Վիտէօ փլէյ»-ներուն եւ «Ռիփոր»-ներուն օրերը համարուած են, մինչ «Տի. Վի. Տի.»-ները կ'ապրին իրենց փառքի օրերը եւ անոնց ապագան աւելի փայլուն է, քան երբեք:

Յամենայնդէպս, «Վիտէօ Երիզ»-ը, որուն մէկ ոտքը գերեզմանին մէջ է, տակաւին իր մահկանացուն չէ կնքած: Անոր յարատեւումին գաղտնիքը պարզ է: Քառորդ դարէ ի վեր երկրագունդին վրայ տարածուած եւ զրեթէ բոլոր տուններուն մէջ մտած այս սարքը դիւրին չէ աղբանոց նետել եւ գայն փոխարինել «Տի. Վի. Տի. Փլէյ»-ով մը, ի վերջոյ շատեւոր պատահի վիտէօ նկարահանումը, կնուէրի եւ տարեդարձի տօնակատարութիւնները, վկայականաց բաշխումի հանդիսութիւնները արձանագրուած են վիտէօ Երիզի վրայ եւ հետեւաբար, «Վիտէօ փլէյ»-ը թափել կը նշանակէ մեր անցեալին պատմութիւնը անոր հետ ուղարկել աղբանոց: Աւելին, «Վիտէօ փլէյ»-ներով կարելի է գրուելութեամբ արձանագրութիւններ կատարել, միեւնոյն երկրին վրայ հարիւրաւոր անգամներ տարբեր ժապաւէններ արձանագրել, մինչ արձանագրութեան կարելիութիւնը ընձեռող «Տի. Վի. Տի. Փլէյ»-ներուն սակերը մտաչելի չեն ընաւ: Յամենայնդէպս, «Տի. Վի. Տի. Փլէյ»-ներու սակերուն նուազումով, եւ այսօրուան յիշատակելի արարողութիւններուն: «Տի. Վի. Տի.»-ներու վրայ արձանագրումով, մօտեցած է օրը, երբ օրաթերթերու մէջ պիտի կարդանք, կամ դրացիէ մը պիտի լսենք, որ ոչ եւս է վիտէօն:


«ԱՉԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգայի» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցեն հրատարակման թուականէն առնուակ օր սը առաջ, Մինչեւ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:00: ՄԱՀԱԶՌՆԵՐԸ բացառութիւն են: Մահազ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԻՆՖՕ-ԿԼՈՊ»


Երկտորոնային սարքերու մեծագոյն ցուցահանդէս-փառատօն «Cebit»-ի այս տարուան ցուցասրահին ամէնէն ուշագրաւ սարքերէն մէկը կը հանդիսանար «Ինֆօ կլոպ»-ը, որ այլ մոլորակէ մը եկած ըլիջային հեռաձայն մը կը թուի ըլլալ: Հեռաձայնին կապուող այս սարքը ունի զնդածեւ պատառ մը, որուն միջոցով կարելի է կարգալ «Էս. Էմ. Էս.» պատգամներ կամ հեռաձայնողին թիւն ու անոր տուեալները:



Շուրջ 60 տուրար արժող այս կանէքին մասին յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար այցելել www.wave-telc.com կայքը:

ԳԵՐԱՐԳԻԱԿԱՆ ՏՊԻՉ ՄԸ...


Տպիչներու արտադրութեան մեծագոյն ընկերութիւններէն «Էփսոն» վերջերս հրատարակ իջեցուց «Էփսոն Սթայլը 3030» տպիչ սարքը, որ իր գեղատիպ կառուցին եւ «աւանդական» կարելիութիւններուն կողքին առիթ կ'ընձեռէ թուագրային քամերներէ լուսանկարներ տպելու՝ առանց երրորդ սարքի մը միջամտութեան: Այսպէս, տպիչը ուղղակիօրէն կարելի է կապել...



քամերային, շնորհիւ «Ես. Էս. Պի.» տպիչէթ փրինթ» արհեստագիտութեան, եւ քիչ ետք հիանալի յստակութեամբ տպուած լուսանկարը գուրս կու գայ սարքին «ընդերք»էն:

... ԵՒ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ԿԱՊՈՒՈՂ ՊԱՍՏԱՐ ՄԸ

Համակարգիչներու արտադրութեան ճարտարարուեստը առանցքային եղափոխութիւններու կ'ենթարկուի: Կը փոքրանան սարքերը, կը նուազին օգտագործուած թիւերը, եւ այս բոլորը այնքան մը, որ ի վերջոյ կ'ունենան ան քայտատառ



մը եւ ըւրիշ ոչինչ: Անթել պատառ-համակարգիչներ իտէլական են համացանցի հետ կապուելու համար, տրուած ըլլալով, որ անոնք դիւրաւ փոխադրելի են եւ նոյնքան դիւրաւ օգտագործելի: Այս սարքերէն կ'արժէ յիշել վերջերս արտադրուած «Փլէյբոտ Պէլ Սմարթ Տիպիլ»-ը, որ համակարգիչին կապուած է անթել հարդիպակութեամբ եւ, հետեւաբար, մեծապէս գործնական է: Սարքին մասին տեղեկութիւններ տրամադրուած են www.packardbell.com հասցէով կայքին մէջ:

Պատրաստեց՝ Խ. ՄՈՒՐԱՏԵԱՆ



Մանկապատանեկան

ՓՐԿԵՆՔ ԱՄԱՁՈՆԸ

(Ա. ՄԱՍ)



Ամազոնը աշխարհի ամեն մեծ արևադարձային անտառն է: ԱՆ կը պատարել շատ հարուստ բուսականությունը և կենդանական աշխարհը: Սակայն այս գանձը վտանգված է...

Ո՞ՒՐ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԱՄԱՁՈՆԸ

Փերուէն մինչև Ատլանտեան օվկիանոս Ամազոն գետը եւ իր հարկատուները կը կտրեն 7,300,000 քառ. քիլոմետր² ծածկուած արեւադարձային խոնաւ անտառներով: Այս հսկայական շրջանը Ամազոնի անտառն է: Այս անտառը կը ծածկէ Պրագիլին երկու երրորդը: Մնացեալը կը բաժնուի 8 տարբեր երկիրներու վրայ՝ Պոլիվիա, Քոլոմբիա, էքուատոր, Փերու, Կիլիման, Սուրինամ, Վենեսուելա, Ֆրանսական Կիլիման:

ԲՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ


Ամազոնի անտառին մէջ ապաստան կը գտնեն մեր մոլորակին վրայ բնակող բոլորները եւ անտառներու տեսակներուն երկու երրորդը: Այս գանձը ուսումնասիրելով՝

ՓՈՐՁԱ՞Ց ԵՍ

ՄՈԼՈՐԱԿՆԵՐԸ ԿԸ ՏԱՓԱԿՆԱ՞Ն



Դուն կ'երեւակայես, թէ մոլորակները ամբողջովին գնդաձեւ են: Մոլորակները տափակ են բնութեանը շրջանին: Այս երեւոյթը



հասկնալու համար կատարէ հետեւեալ փորձը:


ՊԵՏՔ ՈՒՆԻՍ

1 մետր բարակ պարան, թեթեւ խաւաքարտի կտոր մը, հաստ խաւաքարտ, կարկին մը, մկրատ:

ՓՈՐՁԸ


1) Հաստ խաւաքարտին վրայ կարկինով զծէ եւ

կտրէ 10 սմ. տրամագիծով կլորակ մը: Կեղծուող իրարմէ 1 սմ. հեռու երկու ծակեր բաց:



2x32 սմ. երկու երկզներ: Զանոնք սկաւառակին ուղղահայեաց ձեւով անցուր իրարու: Իւրաքանչիւր երկզին սկաւառակին մէջ կողմը փակցուր կպչուն երկզով մը:

3) Պարանը անցուր հաստ խաւաքարտին ծա-



կերուն մէջէն, ապա ծայրը հանգոյցը: Այս գոյգ պարանը անցուր երկզներուն իրարու հանդիպած երկու բաժիններէն:

4) Ստացուած գնդաձեւ մարմինը դարձուր միշտ ուղղութեամբ: Երբ պարանը լաւ դառնայ եւ փաթեթուի, ձեռքերդ իրարմէ հեռացուր: Գունը դը պիտի շարունակէ դառնալ, եւ անոր երկու կողմերը պիտի տափակնան:



ԳԻՏԵԻ՞Ր, ԹԵ...

● Ամազոն գետը իր 1100 հարկատուներով մեր մոլորակին ամեն մեծ գետն է:

● Պրագիլի մէջ կ'ապրին 230 հնդիկ ցեղախումբեր Ամազոն գետի ափերուն եւ անտառին մէջ: Այս 250 հազար հնդիկներու կեանքը կախեալ է անտառէն:

● Բազմաթիւ դեղեր շինուած են Ամազոնի մէջ գտնուող բոյսերէն. օրինակի համար քայէնի քիմիկ կեղեցեքու մէջէն քնուած ճիւղ մը կարելիութիւնը կու տայ խնամելու ճահճատեղը:

● Որսորդութեամբ կը զբաղին այր մարդիկը, որոնց կը հետեւին ցեղախումբին պատանի տղաքը: Անոնք կը շինեն իրենց անձնական նետերն ու աղեղները:

● Մանիքը Ամազոնի հնդիկներուն հիմնական ուտելիքն է: Անոր արմատները կը խարտուին եւ անոնցմէ կը պատրաստուի ալիւր:

● Փիրարուբուն երկրագունդին անուշ ջուրի ամենէն մեծ ձուկն է: Ան կրնայ կշռել 300 քիլո եւ ունենալ 3 մետր երկայնք:


ՍՆՆԴԱՐԱՐ ՈՒՏԵՆԻՔՆԵՐ

ՍՄԲՈՒԿԸ

● Սմբուկը մուկ գոյնով, փայլուն կեղեւով գեղեցիկ բանջարեղէն մըն է: Ան ծագում առած է Հնդկաստանէն եւ Չինաստանի մէջ կը մշակուէր աւելի քան 2000 տարիներէ ի վեր: Ապա արարներուն եւ պարսիկներուն շնորհիւ ան կ'անցնի Աֆրիկէն, կը հասնի Իտալիա, Ֆրանսա...

● Երբ մենք այս բանջարեղէնը տապկենք, անոր միջուկը ձէթով կը լեցուի սպունգի մը նման:

Այս ձեւով ան դժուար կը մարսուի, հետեւաբար նախընտրելի է զայն եփել (զայն պատառաքողով մը ծակելէ ետք) փուռին մէջ ջուրով եւ շոգիով... միակ պայման՝ զայն չաղել, յատկապէս եփելուն սկիզբը:



ԳԻՏԵԻ՞Ր, ԹԵ...

● Որովհետեւ սմբուկին միջուկը շատ շուտ կը սեւենայ, պէտք է զայն շուտ եփել կամ վրան լեմոնի հիւթ սրսկել:

● Պղտիկ սմբուկ մը ունի քիչ հունտեր եւ կակուղ կեղեւ մը: Սակայն, եթէ ան մեծ ըլլայ, երբեմն լեղի կ'ըլլայ: Հետեւաբար կարելի է զայն մեծ աղով ծածկել 1-2 փամ, որպէսզի ան իր ջուրը եւ լեղիութիւնը կորսնցնէ, կամ՝ զայն 15 վայրկեան ջուրին մէջ թաթխել:

● Երբ սմբուկը հասուն ըլլայ, պղտիկ ճնշումէ մը ետք մատներուն տեղը երեւելի կը մնայ: Այլապէս միտք ետ իր նախկին ձեւը կ'առնէ:

ԶԻԹԱՊՏՈՒՂԸ

● Զիթենին կը բուսնի Միջերկրականին շուրջ: Ան ճուրճ, հանգուցաւոր կոճղով պղտիկ ծառ մըն է: Ան յաճախ հարիւրամեայ կրնայ ըլլալ, կը տոկայ չորութեան երկար ժամանակաշրջաններու, չի վախնար զարնան ու յաճախ կը ծաղկանայ վերջապահութեան կ'արտադրէ տասնեակ քիւրներով անուշահոտ պտուղ:

● Զիթապտուղները նախ կանաչ կ'ըլլան, ապա հասուննալով՝ կը դառնան վարդագոյն, մանիշակագոյն, սրճագոյն եւ, վերջապէս, սեւ: Զիթապտուղին ձէթը հանելու համար զայն կը ճգմեն խմոր մը ստանալու համար: Ապա այս խմորն այ կը ճգմուի ստանալու համար անուշահոտ, ձէթոտ հիւթը:



ԳԻՏԵԻ՞Ր, ԹԵ...

● Զիթապտուղին ձէթը անհրաժեշտ է խոհանոցին մէջ: Ան կը գործածուի ճաշ եփելու համար, հում բանջարեղէններուն հետ կամ պահածոներ պատրաստելու համար: Սակայն ան կը գործածուի նաեւ մորթին համար: Ան կը խնամէ դէմքին չոր մորթը, մազերը կակուղ եւ փայլուն կը դարձնէ, կը զօրացնէ կոտորուող եղունգները եւ այլն:

● Ամբողջ աշխարհին մէջ ձիթենին ճիւղը խորհրդանշան է խաղաղութեան եւ իմաստութեան:

ԵԿԵ ԾԱՐԱԴՐԵՆՔ

Կը սիրեն պատմութիւններ հնարել, երեւակայութիւնդ աշխատանք, շարադրել...



Մ ա ս ն ա կ ց է՝ «Պպտիկ-Ապտիկ»ի շարադրութեան մրցումին:

– Մրցումին կրնան մասնակցիլ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտներ:

– Արձանագրութիւնները տեղի կ'ունենան 9 Մայիսին 27 Մայիս, հեռաձայնելով 01-260115 թիւին, Երկուշաբթիին Ուրբաթ օրերը, առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ երեկոյեան ժամը 5:00:

– Մրցումը տեղի կ'ախտի ունենայ կիրակի, 1 Յունիսին, «3. Տէր Մեթրոնեան» թատերասրահին մէջ, առաւօտեան ժամը 10:00-12:30:


Բոլոր մասնակցողները պէտք է թատերասրահ գտնուին ժամը 9:30ին:

Մասնակցողները պէտք է իրենց հետ ունենան իրենց գրեական պիտոյքները:


– Իւրաքանչիւր մակարդակի առաջին, երկրորդ եւ երրորդ հանդիսացողները պիտի ստանան արժեքատու շուէրներ:

– Արդիւնքները պիտի յայտարարուին «Պպտիկ-Ապտիկ»ի Ուրբաթ 20 Յունիսի թիւով:


Ժ Ա Մ Ա Ն Յ



Կրնա՞ս գտնել այն նոյնանման մանրամասնութիւնները, որոնք գոյութիւն ունին այս պատկերին եւ վարի պատկերին մէջ:



Այս տեսարանը ներկէ՛ գեղեցիկ գոյներով:





Կրնա՞ս գտնել իրարու նմանող երկու ջաղացքները:

Պատրաստեց՝ ԶՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ՖԻՖԱԻ ՆԱԽԱԳԱԸ ՍԵՓ ՊԼԵԹՐ ՏԵՍԱԿՅԵՅԱԻ ԸԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱԸ ՌՈՊԵՐԹ ԲՈՉԱՐԵԱՆԻ ԸԵՏ

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՄ

ՕԼԻՄՓԻՔ – ԱՆՍԱՐ ՏԱՔ ԸԱԿԱՏՈՒՄ

Շաբաթավերջին տեղի կ'ունենան Լիբանանի ֆուտբոլի ախոյեանության 21րդ եւ նախավերջին հանգրուանի մրցումները՝ հետեւեալ յայտագիրին հիմամբ.

	ԺԱՄ	ԴԱՇՏ
Օլիմպիք – Անսար	4:45ին	Պէյրուք
Թատամոն Սուր – Ահո	4:45ին	Սուր
●ՎԱՂԸ		
Ախա Ալէյ – Շապապ Սահէյ	4:45ին	Մ. Աւան
Սալամ – Մապարա	4:45ին	Թրիփոլի
Պըրժ – Սաֆա	4:45ին	Պէյրուք

ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Լիբանանի պասքեթբոլի տարիքային ախոյեանության մրցումներուն, Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասի աղջիկները (1986 - 87ի ծնունդ) կիսաարտականին իրենց կատարած մրցումին 59 - 52 (կիսախաղ՝ 28 - 23, ի նպաստ՝ Հ.Մ.Ը.Մ.ի) արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ֆիտաս Սայտան, ապահովեցին աւարտական մրցումին իրենց տոմարը:

Վաղը՝ Կիրակի, Ղապիթի դաշտին վրայ ժամը 8:00ին, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս կը մրցի Անդրանիկի դէմ, որուն Բ. հանգրուանին հանդիպած էր եւ 73 - 65 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած:

1984 - 85 դասակարգին մէջ, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս 86 - 52 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Շանվիլէն, դուրս մնաց մրցաշարէն:

ՖԻՖԱԻ ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

ՊՐԱԶԻԼ ԿԸ ՄՆԱՅ ԱՌԱՋԻՆ

ՖԻՖԱԻ կողմէ հրապարակուած այս ամսուան ֆուտբոլի ազգային խումբերու ընդհանուր դասաւորման մէջ պարագլուխի դիրքին վրայ հանգիստ բազմած կը մնայ աշխարհի ախոյեան Պրազիլ: Անկա աւելի քան յիսուն կէտի տարբերութեամբ կը գերազանցէ Ֆրանսան (2րդ) եւ Սպանիան (3րդ):

Արժանքին մէկ դիրք բարձրանալով գրաւեց 5րդ դիրքը՝ Հոլանտայէն, որ նահանջեց 6րդ դիրքը:

Երկու դիրքի ոստում արձանագրեց Իտալիա (12րդ), մինչ երկու դիրքով նահանջեց Փորթուգալ (14րդ):

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբը մնաց 105րդ դիրքին վրայ, մինչ Լիբանան 118րդ դիրքէն նահանջեց 119րդ դիրքը: Սուրիա երկու դիրքի ոստում մը արձանագրելով այժմ կը գրաւէ 90րդ դիրքը:

Այս ամսուան ընթացքին մեծագոյն ոստում արձանագրողը հանդիսացաւ Վրաստան, որ 93րդ դիրքէն բարձրացաւ 84րդ դիրքը:

Ստորեւ՝ առաջին քսան դիրքերը գրաւողներուն եւ կարգ մը կարեւորագոյն երկիրներուն դասաւորումը (փակագիծին մէջ նշուած է անոնց անցեալ ամսուան գրաւած դիրքերը).

	ԿԵՏ
1. Պրազիլ	(1) 843
2. Ֆրանսա	(3) 784
2. Սպանիա	(2) 784
4. Գերմանիա	(4) 757
5. Արժանթին	(6) 753
6. Հոլանտա	(5) 746
7. Անգլիա	(7) 739
8. Թուրքիա	(8) 722
9. Մեքսիք	(9) 720
10. Մ. Նահանգներ	(10) 715
10. Դանիա	(11) 715
12. Իտալիա	(14) 709
13. Չեխիա	(13) 707
14. Փորթուգալ	(12) 706
15. Ալիը	(15) 704
16. Պելճիք	(16) 681
17. Ընսթրա Ռիթ	(18) 671
18. Ըամերուն	(17) 666
19. Փարակուէյ	(19) 664
20. Շուէտ	(20) 660
.....	
25. Ռուսիա	(24) 641
26. Խրուսթիա	(26) 640
27. Ռումանիա	(28) 631
.....	
34. Իրան	(34) 614
35. Պուլկարիա	(38) 611
.....	
84. Վրաստան	(93) 469
.....	
90. Սուրիա	(92) 448
.....	
105. ՀԱՅԱՍՏԱՆ	(105) 417
.....	
119. Լիբանան	(118) 388



ՍԵՓ ՊԼԵԹՐԻՆ՝ Հայաստանի նախագահ Ռոպերթ Բոչարեանի հետ հանդիպումին ընթացքին

խան Չաքարեան ողջունելով Պլեթրի Հայաստան այցելութիւնը, ըսաւ, որ ՖԻՖԱ – Հայաստան կապերը հետզհետէ աւելի կ'ամրապնդուին:

Ապա, Հայաստանի Ռդմպիականի յանձնախումբի որոշումով, Չաքարեան Պլեթրի շնորհեց «Ոսկի նշան» շքանշանը, իբրեւ մարզական աշխարհի բացառիկ անձնաւորութիւն:

Երեւանի քաղաքապետ Ռոպերթ Նապարեան եւ Հայաստանի ֆուտբոլի ֆետերասիոնի նախագահ Ռոբէն Հայրապետեան իրենց կարգին շնորհակալութիւն յայտնեցին Պլեթրի Հայաստան այցելութեան եւ ՖԻՖԱին տրամադրած գումարին համար:

Այցելելով մարպարոց, Պլեթրի ներկայ եղաւ պատանի ֆուտբոլիստներուն կատարած տարվայրկեան տեւողութեամբ մրցումի մը, որմէ ետք կատարեց մամլոյ ասուլիս մը: Ան ըսաւ, որ Հայաստան հարուստ եղած է ֆու-



Պլեթրի բացումը կը կատարէ Մալաթիայի ֆուտբոլի դպրոցին



Պլեթրի կը յանձնէ ՖԻՖԱի յատուկ յուշամետալը պոլի տաղանդներով:

Յիշելով «Արարտ-73»ը, Պլեթրի ըսաւ, որ այդ մէկը լուսագոյն ապագոյն է Հայաստանի ֆուտբոլիստներուն փառահեղ անցեալին մասին:

Երափակելով, Պլեթրի ըսաւ, թէ ինք իբրեւ ՖԻՖԱի նախագահ իր սերտ յարաբերութիւնները պիտի շարունակէ Հայաստանի հետ:

ԹԵՆԻՍ

ԵՐԿՈՒՇԱՐԹԻ ՕՐ ԿԸ ՍԿՍԻ ՌՈՒԱՆ ԿԱՐՈՍԻ ՄՐՅԱՇԱՐՔԸ

Երկուշաբթի, 26 Մայիսին, Ֆրանսայի մէջ կը սկսի թենիսի Ռուան Կարոսի միջազգային բաց մրցաշարքը, որ տարուան երկրորդ կրան շէմ մրցաշարքը կը հանդիսանայ Աւստրալիոյ թենիսի բաց մրցաշարքէն ետք:

Ա. հանգրուանին



Մարաթ Սաֆին

հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան պիտի ունենայ բաւական դժուար մրցում մը, նկատի ունենալով որ ան պիտի ճակատի 6րդ դասուած ամերիկացի Էնտի Ռոսիքի դէմ:

Տրդ դասուած արժանքիւնաւոր Գալիք Նալպանտեան պիտի ճակատի սպանացի Ալպեր Մոնթանէսի դէմ, մինչ Կոլիցերիահայ Մարի-Գայիանէ Միքայէլեան իր դէմ պիտի ունենայ Անճելիք Ռիտաժան (Հնդկաստան):

●ՖՐԱՆՍԱՅԻ ԹԵՆԻՍԻ ԲԱՅ ՄՐԳԱՇԱՐՔԻՆ (Ռուան Կարոս) կազմակերպիչները յայտնեցին, թէ ռուս Մարաթ Սաֆին (23 տարեկան) իր մասնակցութիւնը պիտի չբերէ յառաջիկայ շաբաթակիցին սկսելիք Ֆրանսայի կրան շէմ մրցաշարքին վերադարձը: Ան այս տարուան առաջին կրան շէմի մրցաշարքին ալ (Աւստրալիա) բացակայած էր: Այլ մարզիկ մը՝ Ռոպի Կիւրիփի (Մ. Ն.) իր կարգին վերադարձը ըլլալով պիտի բացակայի մրցաշարքէն: Անոնց փոխարէն նկատի առնուեցան Մարիանո Փուէրթա (Արժանթին) եւ Սեսիլ Մամիթ (Մ. Ն.):

BALTAYAN ELECTRONIC

Ս. մասնաճեղք
Պարտ Հասնուր
Սրբնմկոտ արդարապէս
հեռ. : 01 / 262901

Ս. մասնաճեղք
Տարբ. հեռ. : 01 / 259680

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՀԱՍՏԱՍՏԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՍԵՆՈՂՆԵՐՈՒ ՍԻՌԻԹԻՒՆ

ԱՆՂԱՍԱԿԱՆ ԸՆԻԱՔ
ԱՍԱՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Տեղի կ'ունենայ այսօր՝ Շաբաթ, 24 Մայիս 2003, երեկոյեան ժամը 6:00ին, միութեան կեդրոնին մէջ. Մայրավանք, Անթիլիաս: Սիրով հրաւիրուած են բոլոր անդամներն ու օժանդակները:

ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Մայրերու Տօնին Առիթով
ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՇԱՆԴԵՍ

հայրենի երգիչ եւ ջութակահար
ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Ընկերակցութեամբ՝ Սագօ Պետրոսեանի եւ իր նուագախումբին

Մասնակցութեամբ՝ հանրաժանօք երգիչ - երգչուհիներու եւ դերասաններու նաեւ՝ հաճելի անակցկալներ

Ողիս եւ խանդավառ մթնոլորտի մէջ, հայկական, ռուսական, քնչույական, արաբական եւ յունական յայտագիր

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 24 Մայիս 2003-ին, երեկոյեան ժամը 9:00-էն սկսեալ ճաշարան Al Amin-ի, մէջ Լուէլզի-ժամուր, մայրուղիի վրայ:

● Տոմսերը ստանալու համար դիմել GEKA Records հեռ.: 03/242685 եւ յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել՝ հետեւեալ թիւերուն 03/741230 - 03/666060 - 03/667687

ԼԻԲԱՆԱՆ ԼԻԲԱՆԱՆ ԼԻԲԱՆԱՆ

ՀԱՐԱԽԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ

ԱԶՍԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԿԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուղիղ երեք տարի առաջ, 25 Մայիսին, հարա-
ւային Լիբանանը կ'ապստազրուէր իսրայէլեան
լուծէն, շնորհիւ Գիմադրութեան ուժերուն, լի-
բանանեան բանակին եւ լիբանանցի ժողովուր-
դին ապստապելու կամքին եւ իրաւունքին:

ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հարախի ապստազրութեան երրորդ տարե-
դարձին առիթով, երէկ հարաւային Լիբանանի
տարբեր շրջաններու մէջ տեղի ունեցան տօնա-
կատարութիւններ ու տողանցքներ:

Ամալ շարժումի կազմակերպութեամբ Թըպիսի-
նի մէջ տեղի ունեցաւ տօնակատարութիւն մը,
որուն ներկայ գտնուեցան երեսփոխան Ալի
Պապի, քաղաքական եւ բարձրաստիճան այլ
պաշտօնատարներ, ինչպէս նաեւ հարաւայինե-
րու հոծ բազմութիւն մը:

Պապի իր արտասանած խօսքին մէջ շեշտեց
հարախի ապստազրութեան եւ դիմադրութեան
արձանագրած յաղթանակին անբաժանելի
անհրաժեշտութիւնը եւ դիմադրութեան կառչած
մնալու ընտրանքը, հասնելու համար տակաւին
բռնագրաւուած Մապրէի Շապաալի ապստա-
զրումին եւ իսրայէլեան բանտերէն լիբանանցի
գերիներու ապստազրութեան:

ՊԱՌԲԱՊԱԹ ՖԱԹԻՄԱՅԻ ՄՕՏ

Պառնապար Ֆաթիմայի մօտ, Քֆարքիլայի
մէջ, երէկ 250 կիներ քայլաբար մը կազմակեր-
պեցին՝ լիբանանեան, պաղեստինեան եւ Հըզ-
պալլայի դրօշակներ եւ իսրայէլը դատապար-
տող պատասաններ պարզած:

Ապա, «Մախ Իսրայէլի» բացագանչելով, ցու-
ցարարները հրկիւզեցին ամերիկեան եւ իսրայէլ-
եան դրօշակները:

ՊԱՍԿԵՐԻ ՄԵՋ

Պալպէքի մէջ, հարախի ապստազրութեան
երրորդ տարեդարձին առիթով տեղի ունենալիք
կեդրոնական մեծ տօնակատարութեան պատ-
րաստութիւնները սկսան երէկ:

Հըզպալլայի կազմակերպութեամբ այս տօնա-
կատարութեան ներկայ գտնուելու հրաւերներ
ուղղուած են իշխանութեան երեք պետերուն,
նախարարներու, երեսփոխաններու, ինչպէս
նաեւ քաղաքական բարձրաստիճան պաշտօնա-
տարներու, Կիսունդակներու ու հոգեւորա-
կաններու: Կը նախատեսուի 50,000 հոգիի ներ-
կայութիւնը:

Նշենք նաեւ, որ տօնակատարութեան ան-
ձամբ ներկայ պիտի գտնուի Հըզպալլայի ընդ-
հանուր քարտուղար Հասան Նասրալլա, որ պի-
տի արտասանէ ձայն մը, անդրադառնալով տե-
ղական եւ շրջանային վերջին կարգադրումնե-
րուն եւ անոնց հանդէպ Լիբանանի կեցուածք-
ներուն:

ՄԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԹԻՒ 1483 ԲԱՆԱԴԵՒԻՆ ՅԱՍԱՐ

ԴԵՍՊԱՆ ՊԵԹԸԸ ԼԻԲԱՆԱՆԻ
ՉՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԽՆԴՐԵՑ
ՆԱԽԱՐԱՐ ՕՊԵՅՏԵՆ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու
հարցերու նախարար Ժան Օպէյտ երէկ ընդու-
նեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դես-
պան Վինսընթ Պեթըլը, որ Օպէյտէն խորեց Լի-
բանանի պօրակցութիւնը՝ ՄԱԿի Ապահովութեան
խորհուրդի թիւ 1483 բանաձեւին, որուն հիմամբ
Իրաքի դէմ պատժամիջոցները կը շնչուին:

Պեթըլ խորեց նաեւ Լիբանանի օժանդակու-
թիւնը Իրաքի տնտեսութեան վերականգնման եւ
Իրաքի վերաշինութեան գործընթացին գծով: Ան
աւելցուց, որ Լիբանանի սեփական մարզի հաս-
տատութիւնները հետաքրքրուած են Իրաքի վե-
րանորոգութեամբ ու վերաշինութեամբ:
Պեթըլ հերքեց, որ ամերիկեան հաստատութիւ-
նէր կը շահագործեն Իրաքի շուկան եւ աւելցուց,
որ այս շուկան բաց պիտի ըլլայ միջազգային հաս-
տատութիւններու առջեւ:

Միւս կողմէ, Օպէյտ հեռաձայնային հաղորդակ-
ցութիւն մը ունեցաւ սուրիացի իր պաշտօնակի-
ցին Ֆարուք Շարէիի հետ: Քննարկուեցան կրե-
տի մէջ Ե. Միութեան միջերկրականեան երկիր-
ներու արտաքին գործոց նախարարներու ժողո-
վին, ինչպէս նաեւ ՄԱԿի թիւ 1483 բանաձեւին
կապուած հարցեր:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԸ ՊԱՀԱՆՁԻ

ՊԱՏԺԸՆ ԴԱՏԱԿԵՐԱՍՓԻԻԹԻ ԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՎԻՒՎԻՒՎԻՒՆՆԵՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Քորաթե-
մի-մէջ «Փարի Պա» դրամատան մէկ պատուիրա-
կութեան հետ քննարկեց տնտեսական հարցեր
եւ ելեկտրականութեան մարզի ապապետականաց-
ման թղթածրարի պատրաստութիւնը, ներկայու-
թեամբ ապապետականացման գերագոյն խորհուր-
դի ընդհանուր քարտուղար Ղապի Եուսէֆի:

Կը նախատեսուի, որ ելեկտրականութեան մարզի
ապապետականացման առնչութեամբ ապապետա-
կանացման գերագոյն խորհուրդը ժողով մը գումա-
րէ յառաջիկայ շաբթուան ընթացքին:
Միւս կողմէ, վարչապետ Հարիրի հեռաձայ-
նային հաղորդակցութիւն մը ունեցաւ Ալճերիոյ
նախագահ Ապտէլլապի Պուրաֆիլքալի հետ եւ
ցուակցութիւն յայտնեց Ալճերիոյ երկրաշարժի
պատճառած զոհերուն համար:

Վարչապետ Հարիրի երէկ նամակներ յղեց
արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու
հարցերու նախարար Ժան Օպէյտի եւ տե-
ղեկատուութեան նախարար Միշէլ Սըմահայի,
անոնց թէյադրելով, որ օրինակաւ միջոցառում-
ներու դիմեն պատճելու պատկերասփիւռի
«Նիու Թի. Վի.» կայանը, իր գործած օրինակա-
ցութիւններուն համար:

ՄԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԻՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԸ Կ'ՈՂՋՈՒՆԵ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՐ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Միջազգային ընտանիքն ու անոր ղեկավարները ողջունեցին միջազ-
գային համագործակցութեան նոր ժամանակաշրջանը, որուն բացումը
կատարուեցաւ Ապահովութեան խորհուրդին մէջ որդեգրուած որոշումով
մը, որուն հիման վրայ պիտի շնչուին Իրաքի դէմ հաստատուած պատ-
ժամիջոցները եւ պարկ պիտի տրուի երկիրին վերաշինութեան:

Ֆրանսա, Գերմանիա եւ Ռուսիա, որոնք հակապատերապման ճակա-
տը կ'առաջնորդէին, ողջունեցին բանաձեւին որդեգրումը՝ պատմութեան
անցընելով Միացեալ Նահանգներու հետ տարակարծութիւններն ու լար-
ուածութիւնը: Ապահովութեան խորհուրդի քուէարկութեան նիստը պո-
շոթի ենթարկած Սուրիան անգամ երէկ յայտարարեց, որ միտքը փոխած
է եւ թէ իր պօրակցութիւնը կը հաստատէ բանաձեւին, որուն դէմ քուէար-
կող չէր եղած Հինգշաբթի օրուան նիստին: «ՄԱՆԱ» լրատու գործակա-
լութիւնը հաղորդեց, որ Դամասկոս ՄԱԿի իր պատուիրակութեան թելադ-
րած է փոխանցել Սուրիոյ պօրակցութիւնը, որուն հիմնական դրդապատ-
ճառը իրաքցի ժողովուրդին տառապանքին մեղմացումն է: «ՄԱՆԱ» կը
շեշտէր սակայն, որ Սուրիա այս բանաձեւը բաւարար չի նկատել իրաք-
ցիները իսկական տէրը դարձնելու իրենց երկիրին եւ անոր հարստու-
թիւններուն: Յայտարարութիւնը դիտել կու տար նաեւ, որ բանաձեւին
պօրավիճակ կանգնի չի նշանակել, թէ Սուրիա իր տեսակէտը փոխած է
Իրաքի պատերապմին հանդէպ, վոր կը շարունակէ ապօրինի նկատել:

Դամասկոս հաստատուած ելույթացի դիւանագետ մը ըսաւ, որ Սու-
րիա կեցուածքը վերատեսութեան ենթարկեց, որովհետեւ չ'ուզէր ինք-
զինք ամբողջ աշխարհէն մեկուսացած տեսնել: Ան աւելցուց, որ Դամաս-
կոս կ'անդրադառնայ նաեւ, որ չի կրնար շարունակել որդեգրումը ար-
մատական կեցուածքին: Այս պատճառով անիկա որոշեց միանալ պօրա-
վիճակ կանգնողներուն շարքերուն:

Արաբական աշխարհի երկիրներէն Յորդանան եւ Եգիպտոս եւս ող-
ջունեցին բանաձեւը: Եգիպտոսի կառավարութեան բանբեր Նապիլ Օս-
ման ըսաւ, որ Գաիիթ մեծ սէր չուներ Սատամ Հուսէյնի հանդէպ եւ թէ
Եգիպտոսի որդեգրած կեցուածքին թիրախն էր մեղմացնել տառապան-
քը իրաքցի ժողովուրդին: Նախագահական խորհրդատու Ռուսամ Պապ
սակայն շեշտեց, որ Եգիպտոս կ'ուզէ արագ կազմութիւնը իրաքեան կա-
ռավարութեան մը:

Յորդանանի արտաքին գործոց նախարար Մարուան Մաշէր յայտնեց,
որ Ամման պօրավիճակ կը կանգնի պատժամիջոցները շնչելու որոշումին:

Ռուսիոյ մէջ, Կրեմլինի բարձրաստիճան խորհրդատուներէն՝ Սերկէյ
Փրիխտոք ըսաւ, որ բանաձեւը Իրաքի վերաշինութեան գործընթացը
հաստատօրէն ՄԱԿի օրինաւոր գիրկը կը վերադարձնէ:

Ողջունումի յայտարարութիւններ կատարուեցան այլազան երկիրնե-
րու եւ ղեկավարներու կողմէ: Իրաքի սահմանակից Թուրքիա եւս ողջու-
նեց «պատմական» բանաձեւը:

Մոցի մամուլը սակայն խանդավառ չէ որդեգրուած բանաձեւով: Սէու-
տական «Ռաթան» օրաթերթը կը գրէր, որ Ապահովութեան խորհուրդի
բանաձեւը կ'օրինականցնէ ամերիկեան «գրաւումը» Իրաքի եւ բռնա-
գրաւումը անոր բնական հարստութիւններուն՝ քարիւղին: Տուպայի «Պա-
յան» կը գրէր, որ բանաձեւը Իրաքը գրաւելու եւ անոր ֆոնտերը տնօ-
րինելու իրաւունք կու տայ Ռաշիդկըրին եւ անոր դաշնակիցներուն՝
օգտուելով իրաքեան կառավարութեան չգոյութեան: Իսկ «Սալիմ» կը
գրէր, որ Պուշտի արդէ, թէ իրաքցիները ի՞նչպէս պիտի սպարին, ի՞նչ
պիտի ուտեն, կամ ինչպիսի՞ բանակ պէտք է ունենան:

ԻՐԱԶԵԱՆ ԲԱՆԱԿՆ ՈՒ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԼՈՒԾՈՒԹԵԱՆ


Իրաքի մէջ ամերիկեան քաղաքային իշխանութիւնը երէկ լուծեց իրաք-
եան բանակն ու ապահովութեան սպասարկութիւններու լայնածիր ու
բարդ ցանցը: Ամերիկացի զիջաւոր պատասխանատուն՝ Փօլ Պրեմըր յայ-
տարարեց, որ ոչ քաղաքական բանակ մը պիտի կազմուի հինին փոխա-
րէն: Ան փորձեց փարատել իրաքցիներուն մտահոգութիւնը, շեշտելով,
որ այսպիսի որոշումներու նպատակն է ցոյց տալ, թէ Սատամի վարչա-
կարգը անվերադարձ հեռացած է:

Պրեմըրի որոշումով լուծուած յայտարարուեցան բանակը, հանրապե-
տական պահակաւորները, ինչպէս նաեւ՝ պաշտպանութեան եւ տեղեկա-
տուութեան նախարարութիւնները: Ինքնաբերաբար լուծուած կ'ըլլայ
նաեւ Յեղափոխական Հրամանատարութեան խորհուրդը, որ Սատամի
իշխանութեան կորիզը կը նկատուէր: Այս որոշումին լոյսին տակ անգործ
կը դառնան 300 հազար վիճուորներ եւ յիշեալ նախարարութիւններուն
2 հազար պաշտօնեաները:

(ԱՅՓ)

ԿԻԼ ԿԸ ԶԳՈՒՇԱՑՆԵ,
ԹԵ ԺԱՄԱՆԱԿԸ ՅԵՏՁՅԵՏԵ
ԿԸ ՆՈՒԱԶԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐԱԿԱՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՒՆ
ՀԱՍՆԵԼՈՒ ԻՄԱՍՏՈՎ

Ա Ն Գ Ա Ր Ա,
23 (ԱՅՓ).-
Թուրքիոյ ար-
քային գործոց
նախարար Ադ-
րիլլա Կիլ
Ուրբաթ օր
զգուշացուցած
է, թէ հեթանոս-
կէ ժամանակը
կը նուազի
Թուրքիոյ հա-
մար՝ եւրոպա-
կան ժողովըր-
դավարական
չափանիշնե-
րուն հասնելու
իմաստով, Եւ-
րոպայի ան-
դամակցելու նոյապակով դաշտօնական բա-
նակցութեան սկսելու համար:



Ե. Միութեան անդամակցութեան Թուրքիոյ
ճիգերուն մասին խորհրդարանական քննար-
կումի մը ընթացքին, Կիլ ըսած է, թէ յառա-
ջիկայ մէկուկէս փարոսան ընթացքին
«կրնանք Ե. Միութեան հետ բանակցութեանց
դուրը բանալ կամ վերջնականապէս փակել
զայն»:

Արքային գործոց նախարարը յայտնած է,
որ կառավարութիւնը «զօրաշարժ»ի ենթար-
կուած է՝ խորհրդարանին մէջ կարգ մը նոր բա-
րեկարգումներ վարեցանքով փայտու համար.
սակայն ան շեշտած է նաեւ, որ նոր օրէնքնե-
րուն գործադրութիւնը նոյնքան կարեւոր է:
«Այս գծով քննադատութիւններ կան եւ
դժբախտաբար անոր մէկ մասը արդարանա-
լի է», ըսած է ան:

Անգարա երկրին եւ արքայաահմանի մէջ
քննադատութեանց ենթարկուած է՝ իր վառե-
րացուցած ժողովրդականացման նոյապա-
կով օրէնքները գործադրած չըլլալու ամբաս-
տանութեամբ, մինչ իշխանութիւնները կը շա-
րունակեն ճնշել մարդկային իրաւունց
խմբակներու եւ այլախոհներու դրայ:

Վերջերս Ե. Միութիւնը քննադատած է
Թուրքիոյ նորագոյն բարեկարգումներուն
գծով փետութեան եւ գործադրութեան միջեւ
գոյութիւն ունեցող «մեծ վիճը»:

Կիլ ըսած է, թէ կառավարութիւնը մօր
ապենէն խորհրդարանին դիպի ներկայացնէ
բարեփոխումներու նախագիծեր, որոնց նոյա-
պակը խօսքի եւ կրօնական ազատութեան եւ
քիւրդ փոքրամասնութեանց իրաւունքներու
ընդարձակումն է:

Կիլ ըսած է, թէ կառավարութիւնը մօր
ապենէն խորհրդարանին դիպի ներկայացնէ
բարեփոխումներու նախագիծեր, որոնց նոյա-
պակը խօսքի եւ կրօնական ազատութեան եւ
քիւրդ փոքրամասնութեանց իրաւունքներու
ընդարձակումն է:

Advertisement for AFHIL medical equipment. Includes text: 'AT HOME Wheelchair Walker Electric Bed Manual Bed Water Mattress Cans Sticks Serum Tripod Walking Frame'. 'HOME MEDICAL EQUIPMENT SERVICES'. 'RENT AND SALE'. 'NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.' Includes an image of a wheelchair.